

2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը¹

2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են ավելի քան 628.3 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ ավելի քան 669.4 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 86.2%-ով և 78.1%-ով ապահովել են տարեկան ծրագրային ցուցանիշների կատարումը:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 16.5%-ով կամ շուրջ 89 մլրդ դրամով: Ընդ որում, 15.5%-ով (78.1 մլրդ դրամով) ավելացել են հարկային եկամուտները, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները, 95.4%-ով կամ 2.9 մլրդ դրամով՝ պաշտոնական դրամաշնորհները, 25.2%-ով կամ շուրջ 8 մլրդ դրամով՝ այլ եկամուտները:

Պետական բյուջեի եկամուտների 92.8%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 6.3%-ը՝ այլ եկամուտների, 0.9%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: ՀՀ Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 15.5 մլրդ դրամ:

2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտներն ու պետական տուրքերը կազմել են ավելի քան 491.5 մլրդ դրամ և ապահովել տարեկան ծրագրի 85.8%-ը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 16.7%-ով կամ 70.2 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի և եկամտահարկի մուտքերի աճով:

¹ Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

Հարկերի և տուրքերի 50.8%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է ավելի քան 249.8 մլրդ դրամ և 23.9%-ով կամ 48.2 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից շուրջ 157.4 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, շուրջ 92.5 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից: Հարկ է նշել, որ մուտքերի աճ է արձանագրվել և ՀՀ սահմանին հարկումից, և ապրանքների ու ծառայությունների ներքին շրջանառությունից ստացվող մուտքերի գծով, ընդ որում, վերջիններիս աճի տեմպը գերազանցել է ներմուծումից ստացվող եկամուտների աճի տեմպը:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 7.7%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 37.8 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 26.6 մլրդ դրամ, որից 11.7 մլրդ դրամը՝ բենզինի և դիզելային վառելիքի, 10.7 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են ավելի քան 11.2 մլրդ դրամ, որից 5.6 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 8%-ով կամ 2.8 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է հանրապետություն ներմուծված ենթակցիզային ապրանքների հարկումից ստացված ակցիզային հարկի մուտքերի 12.8% աճով:

2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 13.2%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 64.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 6.5%-ով կամ 4.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ, քանի որ տնտեսվարողները 2010 թվականի շահութահարկի կանխավճարները վճարել են՝ հիմք ընդունելով 2009 թվականի շահութահարկի ցուցանիշները:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 60.7 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 12.4%-ը:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 27.6%-ով կամ 13.2 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են ավելի քան 25.2 մլրդ դրամ՝ 26.1%-ով կամ 5.2 մլրդ դրամով գերազանցելով 2009 թվականի համապատասխան ցուցանիշը:

2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում բյուջե են մուտքագրվել շուրջ 16.1 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով տարեկան ծրագրի 79.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 4%-ով կամ 624.5 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձվել են ավելի քան 18.6 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.8%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 5.6%-ով կամ 1.1 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների՝ հարկման ընդհանուր ռեժիմի անցնելու հանգամանքով:

2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 7.9 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 75.1%-ով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման, ինչպես նաև այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու և ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել 10.5 մլրդ դրամ այլ հարկեր: Մասնավորապես՝ շուրջ 3.7 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ողյալթին, շուրջ 2.8 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 1.6 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 189.6 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 880.3 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 15.1 մլն դրամ՝ արտոնագրային վճարները, 93 մլն դրամ՝ ՀՀ

հարկային մարմինների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար պետական բյուջեից իրականացվող վճարումները և 1.2 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն ավելացել է 31.4%-ով կամ 2.5 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի գծով մուտքերի աճով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 91.3 մլրդ դրամ՝ 86.7%-ով կատարելով տարեկան ծրագիրը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 9.5%-ով կամ 7.9 մլրդ դրամով:

2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 39.7 մլրդ դրամ և 0.5%-ով գերազանցել տարեկան ծրագրային ցուցանիշը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 25.2%-ով կամ 8 մլրդ դրամով: Նման բարձր ցուցանիշներն ապահովվել են հիմնականում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների հաշվին, որոնք կազմել են շուրջ 12.2 մլրդ դրամ և համապատասխանաբար 2.1 անգամ (6.3 մլրդ դրամով) և 1.9 անգամ (5.8 մլրդ դրամով) գերազանցել ծրագրային և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փաստացի ցուցանիշները: Նախորդ տարվա տասն ամիսների համեմատ 3.7 անգամ կամ 2.9 մլրդ դրամով աճ է արձանագրվել ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց ստացված տոկոսավճարների գծով: Ավելի քան 12.1 մլրդ դրամ են կազմել պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները:

2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին արտաքին աղբյուրներից ստացվել են շուրջ 5.9 մլրդ դրամի պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ծրագրով նախատեսվածի 51.3%-ը: Մասնավորապես՝ 3.4 մլրդ դրամ է

ստացվել Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով կրթության ոլորտում նախատեսված միջոցառումների ֆինանսավորման նպատակով, 285.6 մլն դրամ՝ «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից: Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 2.2 մլրդ դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար, որոնց տարեկան ծրագրի կատարողականը կազմել է 70.8%:

2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 669.4 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով տարեկան ծրագրի 78.1%-ը: Մասնավորապես՝ 597.7 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 71.7 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու ժամանակահատվածում 12.1 մլրդ դրամի ծախսեր են կատարվել պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 3.3%-ով կամ շուրջ 21.4 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է պետական պարտքի սպասարկման ծախսերի և դրամաշնորհների գծով ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազմամբ:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 597.7 մլրդ դրամ՝ 78.3%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 5.6%-ով կամ 31.7 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 56.5 մլրդ դրամ ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 4.1 մլրդ դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են տարեկան ծրագրի համապատասխանաբար 75.4%-ը և 74%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աշխատավարձի ծախսերն աճել են 4.2%-ով, իսկ սոցիալական ապահովության վճարները՝ 4.5%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 124.2

մլրդ դրամ, որի տարեկան ծրագիրը կատարվել է 76.2%-ով, իսկ փաստացի ցուցանիշը՝ 5.3%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 22.9 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով տարեկան ծրագրի 67.4%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 13.7 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 9.3 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 118.5%-ով կամ 12.4 մլրդ դրամով, ընդ որում, աճ է արձանագրվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի գծով:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 14.5 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով տարեկան ծրագրի 79.5%-ը և 6%-ով զիջելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

74.1 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 72.8 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 1.2 մլրդ դրամը՝ միջազգային կազմակերպություններին, 116.8 մլն դրամը՝ օտարերկրյա կառավարություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 27 մլրդ դրամի դոտացիաներ՝ 83.3%-ով կատարելով տարեկան ծրագիրը և 17.9%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Դրամաշնորհների տարեկան ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 84.2%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն ավելացել են 15.2%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 33.6%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 201.1 մլրդ դրամ և 82.9%-ով ապահովել տարեկան ծրագրի կատարումը: Մասնավորապես՝ 146.9 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները, 54.2 մլրդ դրամ՝ նպաստները: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կենսաթոշակների գծով բյուջեի ծախսերն էական փոփոխություն չեն կրել, իսկ նպաստների գծով ծախսերն ավելացել են 4.6%-ով:

2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում պետական բյուջեի միջոցներից 100.3 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ 73%-ով ապահովելով

տարեկան ծրագրի կատարումը և 1.1%-ով զիջելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 71.7 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 76.8%-ը: 72.3 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ 20.8%-ով զիջելով 2009 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 559.8 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ նախորդ տարվա 9.1 մլրդ դրամի դիմաց:

2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 41.1 մլրդ դրամ պակասուրդով՝ տարեկան ծրագրով նախատեսված շուրջ 128 մլրդ դրամի և 2009 թվականի նույն ժամանակահատվածի 108.7 մլրդ դրամ փաստացի ցուցանիշի դիմաց: Պակասուրդի ֆինանսավորման համար ներքին աղբյուրներից ներգրավվել է ավելի քան 54.4 մլրդ դրամ, իսկ արտաքին ֆինանսավորման ցուցանիշը կազմել է -13.3 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 19.5 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցներից մուտքերը: Մասնավորապես՝ 20.3 մլրդ դրամ է մուտքագրվել գանձապետական պարտատոմսերի թողարկումից՝ կազմելով տարեկան ծրագրով նախատեսվածի 67.7%-ը: Մուրհակների մարման նպատակով ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 1.1%-ով՝ կազմելով 21.7 մլն դրամ: 772.8 մլն դրամ ուղղվել է «ՀՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարմանը: Անցած ժամանակահատվածում ներքին ֆինանսական ակտիվների հաշվին պակասուրդի ֆինանսավորումը կազմել է ավելի քան 34.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 44%-ը: Մասնավորապես՝ 17.1 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից, որից 12.2 մլրդ դրամը վճարվել է «Հայռուսգազարդ» ԲԲԸ-ի կողմից: Անցած ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 6 մլրդ դրամի վարկեր: Նշված գումարից շուրջ 5.8 մլրդ դրամը տրամադրվել է ՌԴ կողմից ՀՀ 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից, որից 5 մլրդ դրամը հատկացվել է տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի առաջին բաղադրիչի ֆինանսավորման նպատակով, 350 մլն դրամը՝ «Հայաստանի փոքր և միջին

ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն»» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը, 414.2 մլն դրամը՝ «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ»» ՓՄՁ-ին: 175 մլն դրամ ուղղվել է Գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացվող մասնավոր փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարկային ծրագրին՝ որպես կառավարության համաֆինանսավորում: Շուրջ 99.9 մլն դրամ արտոնյալ պայմաններով տրամադրվել է բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարության վարկավորման նպատակով: 2010 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին պետական բյուջեի ազատ միջոցներից օգտագործվել է շուրջ 23.9 մլրդ դրամ՝ նախատեսված 78.7 մլրդ դրամի փոխարեն:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -13.3 մլրդ դրամ՝ տարեկան ծրագրով նախատեսված 22.2 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ շուրջ 17.5 մլրդ դրամ է կազմել փոխառու միջոցների հաշվին ֆինանսավորումը, -30.8 մլրդ դրամ՝ ֆինանսական ակտիվները:

Հաշվետու ժամանակահատվածում Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրամադրվել են 25.3 մլրդ դրամի վարկային միջոցներ: Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է ավելի քան 7.8 մլրդ դրամ, որից շուրջ 5.4 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 199.3 մլն դրամ՝ ԳՁՄՀ, 88.7 մլն դրամ՝ ՎՁԵԲ, 64.4 մլն դրամ՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 1.1 մլրդ դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 667.6 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 44.1 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը և 285.7 մլն դրամ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Անցած ժամանակահատվածում 28.7 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով կատարվել է 93.6 մլն դրամի վճարում, որից 44.8 մլն դրամը նախորդ տարվա

պարտավորությունն է, և Վրաստանի կողմից փոխանցվել է 2009 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվար ամսին: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 733.5 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 1.5 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: